Հավելված N 192
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2019 թ. օգոստոսի 20 ի N 395-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանրակրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն)պետ (ծածկագիրը՝ 18-34.3-Ղ3-1)
1.2. Ենթակա և հաշվետու է
Վարչության պետն ենթակա և հաշվետու է Նախարարին:
1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ
Վարչության պետին ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը:
1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետերից մեկը:
1.5. Աշխատավայրը
Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝

1. Ապահովում է «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքների մշակման և լրամշակման, վերջիններից բխող փոփոխությունների և լրացումներ իիրականացման աշխատանքները.
2. ապահովում է հանրակրթության և արտադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության մշակումը, մասնավորապես, հանրակրթության պետական չափորոշչի, պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման), պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության, պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման, ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի, դրանց նկարագրերի, որակավորման տարակարգերի, աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունների, ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման, ուսուցիչների ատեստավորման և որակավորման տարակարգերի շնորհման, տարածքային և հանրապետական հանձնաժողովների ստեղծման և գործունեության, ատեստավորման միջոցով որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տալու, ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների ու իրականացման, ուսումնական հաստատությունների լրացուցիչ ֆինանսավորման մրցույթի և այլ իրավահարաբերությունները կարգավորող կառավարության որոշմամբ հաստատվող կարգերի մշակման աշխատանքները.
3. ապահովում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունների շրջանակներում քաղաքականության մշակումը, մասնավորապես, հանրակրթական պետական ծրագրերի, պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման, դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման, ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման

ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողի փոխադրման և ավարտման, ամփոփիչ ատեստավորում և որոշում ուսումնական հաստատության շրջանավարտների համապատասխանությունը հանրակրթության պետական չափորոշ չի պահանջներին՝ կազմակերպման, ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու, բազմահամակազմ դասարան կազմավորելու, առանձին առարկաների դասաժամերին դասարանը խմբերի բաժանելու, սովորողների անհատական ուսուցման, ինչպես նաև դրսեկության ձևով հանրակրթության կազմակերպման, ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի, սովորողների հանրապետական առարկայական օլիմպիադաների, մրցույթների, մանկավարժական աշխատողների մասնագիտական մրցույթների կազմակերպման և անցկացման և այլ իրավահարաբերություններ կարգավորող կարգերի մշակում, լրամշակում և նախարարի հաստատմանը ներկայացում.

4. ապահովում է հանրակրթության և արտադպրոցական ոլորտի բյուջետային և ՄԺԾԾ հայտերի կազմումը.
5. ապահովում է ՀՀ կառավարության տարեկան գործունեության ծրագրի, գերակա խնդիրների սահմանում, իրականացում.
6. ապահովում է հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության և առաջարկությունների ներկայացման իրականացման աշխատանքները.
7. ապահովում է կրթության զարգացման պետական ծրագրի կազման աշխատանքների իրականացումը.
8. ապահովում է զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման աշխատանքների իրականացումը.
9. ապահովում է սովորողների էքստեռն փոխադրական և ավարտական քննությունների կազմակերպման աշխատանքները.
10. ապահովում է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և տարակարգերի շնորհման գործընթացների կազմակերպումը.
11. ապահովում է պետական բյուջեով տպագրվող դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, պարբերականների տպագրության և ազգային փոքրամասնությունների դպրոցների համար դասագրքերի հրատարակման, վերահրատարակման իրականացումը.
12. ապահովում է համապետական միջոցառումների կազմակերպման և անցկացման աշխատանքները.
13. ապահովում է դպրոցականների միջազգային և համահայկական առարկայական օլիմպիադաների համակարգման աշխատանքների իրականացումը.
14. ապահովում է պետական բյուջեով նախատեսված հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ գնումների և դրամաշնորհային մրցույթների գործընթացի իրականացումը.
15. ապահովում է նախարարության ենթակայության հանձնված հանրակրթական, արտադպրոցական, հատուկ, մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսհաստատությունների գործունեության համակարգման աշխատանքները.
16. ապահովում է հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, ձևավորման աշխատանքների համակարգումը.
17. ապահովում է հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների հաշվետվությունների, սուբսիդիաների, ոչ ֆինանսական ցուցանիշների ամփոփման աշխատանքների իրականացումը.
18. ապահովում է ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների հետհամագործակցության իրականացումը.
19. ապահովում է հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և

իրականացման նպատակով միջազգային կառույցների հետ համագործակցության իրականացումը.

20. ապահովում է միջազգային կազմակերպությունների և նախարարության միջև կնքվող հանրակրթության և արտադպրոցական կրթության բնագավառում համագործակցության հուշագրերի և ծրագրերի կազմման աշխատանքների իրականացումը.
21. ապահովում է զարգացման և ռազմավարական ծրագրերից բխող հանրակրթական և արտադպրոցական ոլորտի միջոցառումների իրականացման, ՀՀ կրթության զարգացման ծրագրերից բխող ենթածրագրերի մշակման, մոնիթորինգի և հաշվետվությունների պատրաստման աշխատանքների իրականացումը.
22. ապահովում է կրթության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագրի մշակման և համակարգման աշխատանքների իրականացումը.
23. ապահովում է հանրակրթական հաստատություններում բնապահպանական, <<Առողջ ապրելակերպ>>, թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրերի համակարգման, ընտանեկան բռնության, թմրամոլության, թմրամիջոցների և այլ կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում համագործակցության իրականացումը.
24. ապահովում է հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում դրամաշնորհային ծրագրերի մշակման, իրականացման և հաշվետվությունների ներկայացման աշխատանքների իրականացումը.
25. ապահովում է հանրակրթության և արտադպրոցական կրթության ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հեռավար կրթության կազմակերպման և համակարգման աշխատանքների իրականացումը.
26. ապահովում է հատուկ և ներառական կրթության ծրագրերի մշակման, իրականացման,կազմակերպման համակարգման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների կրթության իրավունքի իրացման աշխատանքների իրականացումը.

Իրավունքները՝

- Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող աշխատանքների իրականացման համար համապատասխան մարմիններից կամ կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, հիմնավորումներ.
- համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ.
- պետական մարմիններից ստացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ՝ նախագծերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև նախագծերը լրամշակելու վերաբերյալ.
- **կազմակերպել հանրակրթության և արտադպրոցական կրթության վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի և պետական քաղաքականության մշակման աշխատանքները.**
- **ապահովել հանրակրթության և արտադպրոցական կրթության զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման աշխատանքները, ապահովում** միջպետական համագործակցության ծրագրերի մշակման և դրանց իրականացման կազմակերպման աշխատանքները.
- պահանջել և ստանալ մարմիններից, պաշտոնատար անձանցից Վարչության գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
- Ներկայացնել առաջարկություններ **հանրակրթության և արտադպրոցական** ոլորտի կրթական ծրագրերի և ընդհանուր աշխատանքների բարեփոխումների վերաբերյալ.

- կազմակերպել հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ստուգումների /փոխադրական և ավարտական քննությունների անցկացման/ գործընթացը.
- Իրականացնել նախադպրոցական, հատուկ, մասնագիտացված, կրթությանն առնչվող միջոցառումների ու մրցույթների նախապատրաստման, անցկացման գործընթացը.

Պարտականությունները՝

- Ապահովել հանրակրթական պետական ծրագրերի, օրինակելի ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, ուսումնական, ծրագրամեթոդական ձեռնարկների մշակման աշխատանքների կատարման գործընթացը.
- կազմակերպել հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգերի մշակման և հաստատման աշխատանքներ.
- ապահովել Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումներ,կրթության և գիտության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքները.
- ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Նախարարության կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերի շրջանակում անհրաժեշտ օգնության տրամադրման իրականացումը.
- ապահովել քաղաքացիների կողմից ստացված դիմումների, գանգատների, նամակների և առաջարկությունների քննարկման,սահմանված ժամկետներում պատասխանելու գործընթացը.
- ապահովել Նախարարության ենթակայությամբ գործող ուսումնական հաստատությունների գործունեությունը.
- ապահովել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ՝ հանրակրթության ոլորտում առկա խնդիրների վերհանման և վերլուծության աշխատանքները.

27. ապահովել հանրային քննարկումների կազմակերպումը և անցկացումը.
28. ապահովել ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ընդունում, վերլուծումը, ամփոփումը, պետբյուջեի կատարումն ապահովող ՀՀ կառավարության հանձնարարականների կատարման համակարգումը.
29. կազմակերպել կրթության զարգացման պետական ծրագրի առաջարկությունների մշակման աշխատանքները.

- կազմակերպել պետական կրթական չափորոշիչների մշակման և դրանց իրականացման աշխատանքները.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2.Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3.Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձ

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4.Անհրաժեշտ կոմպետեցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում

6. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Բանակցությունների վարում
3. Բողոքների բավարարում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրաստում:

4.Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատաքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ունի ազդեցություն որոշակի աշխատանքների համակարգման մասով:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում,վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: